ՀՏԴ 338.2(479.243)
Տնտեսագիտություն

Մանուշ ՄԻՆԱՍՅԱՆ
տ.գ.թ., ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ
email: minasyan.manush@mail.ru

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆԵՐՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում ներկայացվել է անկախության շրջանում արդյունաբերական քաղաքականության հիմնական միտումները, կատարվել կառուցվածքային վերլուծություն և հիմնավորվել դրա հետագա զարգացման որոշ առաջարկություններ: Դիտարկվել են նաև ԱՀ-ում առկա ներուժի բացահայտմանն միտված արդյունաբերական քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնական ուղղությունները:

Հիմնաբառեր. *Արդյունաբերական քաղաքականություն, տնտեսական աճ, արդյունաբերական արտադրության կառուցվածք, ռազմականացված տնտեսություն, մրցակցային առավելություն, արտահանման խթանում*

М.Минасян

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

В статье представленны основные тенденции промышленной политики в период независимости, сделан структуральный анализ и обоснованы некоторые предложения для дальнейшего развития.

Рассматривались также основные направления выявления существующего потенциала Арцахской Республики в связи с повышением эффективности промышленной политики.

Ключевые слова: *промышленная политика, экономический рост, структура промышленного производство, милитаризованная экономика, конкурентное преимущество, стимулирование экспорта*

M.Minasyan

THE MAIN DIRECTIONS OF THE DEVELOPMENT OF INDUSTRIAL POLICY IN ARTSAKH REPUBLIC

The article deals with the main trends of industrial policy in the period of independence, conducts structural analysis and justifies some proposals for further development.

The main directions of identifying the existing potential of Artsakh Republic in connection with increasing the efficiency of industrial policy were also considered.

Key words: *Industrial policy, economic growth, structure of industrial production, militarized economy, competitive advantage, export promotion.*

Արցախի Հանրապետությունում արդյունաբերական քաղաքականությունն՝ որպես տնտեսական քաղաքականության դրսևորման հիմնական ուղղություններից մեկը և շուկայական կարևոր ենթակառուցվածք, գտնվում է կայացման փուլում, որի զարգացման միտումների ընտրությունը բխում է ընդհանուր տնտեսական քաղաքականության պահանջներից:

Ընդհանրապես, պետությունը արդյունաբերական քաղաքականության միջոցով կարգավորում է արդյունաբերության զարգացման գործընթացը՝ դրանով իսկ հիմք ստեղծելով տնտեսության աճի համար: Այս առումով էլ արդյունաբերական քաղաքականությունը դառնում է ներկայում շուկայական ճանապարհով դանդաղ, բայց կայուն քայլերով ընթացող Արցախի տնտեսական ներուժի ամրապնդման հիմնական նախադրյալներից մեկը՝ ստիպելով իր վրա պատշաճ ուշադրություն սևեռել: Հետպատերազմյան Արցախում արդյունաբերական քաղաքականության տեղի և դերի ճիշտ ընտրությունը հանդիսանում է տրանսֆորմացիոն զարգացման շղթայի կարևորագույն օղակներից մեկը, այն պետք է հանդես գա որպես պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության որոշակի կարևոր բաղադրիչ: Ընդ որում, մեր գնահատմամբ, սոցիալ-տնտեսական քաղաքականությունը պետք է ոչ թե իրենից ներկայացնի ներդրումային, սոցիալական, ֆինանսական, արդյունաբերական և արտաքին տնտեսական քաղաքականությունների մեխանիկական հավաքածու, այլ՝ ուղիղ և հակադարձ կապերով փոխկապակցված բարդ համակարգ: Ինչ վերաբերում է արդյունաբերական քաղաքականությանը, ապա այն պետք է ակտիվորեն փոխներգործի տնտեսական քաղաքականության բոլոր բաղադրիչների վրա:

Տնտեսական վերափոխումների սկզբնական շրջանում պետությունը, օբյեկտիվորեն, իր գործունեության ընթացքում օգտագործում է արդյունաբերական քաղաքականության սոսկ առանձին տարրեր, որոնք միավորված չէին մի ընդհանուր ռազմավարական համակարգում: Թերևս

դա է հիմնական պատճառը, որ Արցախում արդյունաբերությանը վերաբերող պետական ծրագրերը բավականաչափ արդյունավետ չեն: Մասամբ դա բացատրվում է այդ ծրագրերի վատ կոորդինացմամբ և դրանց իրականացման համար տրամադրված միջոցների ոչ բավարար ծավալով: Արդյունաբերության մեջ ցածր արտադրողականություն և շահագործման արդյունավետություն, ինչպես նաև բարձր էներգատարություն ունեցող ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու գործընթացը պայմանավորված է նոր տիպի տնտեսություն կառուցելու կարողությամբ: Կարծում ենք պարզ սպառմանն ուղղված արդյունք արտադրելու համար տեխնոլոգիաների ներմուծումից պետք է անցում կատարվի տեխնոլոգիապես հասուն արդյունաբերության, որը հիմք կհանդիսանա երկրում գիտելիքահենք տնտեսության մրցունակության բարձրացման համար: Գաղտնիք չէ, որ արդյունաբերության կառուցվածքային զարգացման քաղաքականությունը արտահայտում է պետության տնտեսական քաղաքականության նյութականացման հիմնական բաղադրիչներից մեկը և նախանշում տնտեսական աճի ապահովման և տնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, դրանց իրականացման մեխանիզմների մշակման և իրականացման ուղղությունները: Այսինքն՝ եթե այլ ոլորտներում տնտեսական քաղաքականության կիրառման շրջանակները որոշված են ըստ տվյալ ոլորտի առանձնահատկություններ-ի, ապա արդյունաբերական քաղաքականությունը ամբողջապես կախված է պետության կողմից իրականացվող՝ տնտեսության ինդուստրացման մակարդակից: Հանդիսանալով տնտեսական աճի արագացման կառուցվածքային զարգացման քաղաքականություն, վերջինս հետապնդում է նաև տնտեսական ինքնուրույնության, տնտեսական անվտանգության և մրցակցության ապահովման, հարկային, վարկային և ներդրումային քաղաքականության իրականացման նպատակների ամբողջություն: 2018թ ԱՀ-ում արձանագրված տնտեսական աճի 11.9տոկոսային կետից 7.2-ը արդյունաբերության բաժինն է, 2017թ՝ համապատասխանաբար 15.6տոկոսային կետից 11.7-ը: 1995թ համեմատ արդյունաբերական արտադրանքը 2018թ անվանական առումով աճել է 76.2անգամ, այդ թվում մշակող արդյունաբերության արտադրանքը՝ 25.8անգամ, էներգետիկայինը՝ 50.6անգամ, հանքագործության արտադրանքը զրոյական մակարդակից հասել է արդյունաբերության արտադրանքի 55.4տոկոսին: Համախառն ներքին արդյունքի կառուցվածքում արդյունաբերության մասնաբաժինը 2000թ 7.4տոկոսից աճել է մինչև 28.5տոկոսի՝ 2018թ, արդյունաբերաարտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը 2576մարդուց՝ 6518մարդու, միջին ամսական աշխատավարձը 22573դրամից 184545դրամի: ԱՀ արտահանման կառուցվածքում արդյունաբերությունը բոլոր ժամանակներում մեծ կշիռ ուներ, սակայն աճի շարժընթացը այստեղ ևս նկատելի է. այսպես, 1995թ 64.2տոկոսից 2018թ

այն հասել է 90.7տոկոսի: Բնականաբար, ներկայացված ցուցանիշները արդյունաբերական արտադրանքի բնեղեն դրսևորումներ ևս ունեն, միայն էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 8.9անգամ՝ 2018թ կազմելով 385.1մլն կվտ/ժամ[1]: Ճյուղում նման զարգացումները կատարված ներդրումներով են պայմանավորված, որպես հետևանք նաև հիմնական միջոցների ցուցանիշի փոփոխությունն է:

Արդյունաբերական քաղաքականությունը մեկնաբանվում է նաև որպես տնտեսության առանձին ճյուղերի կամ ենթաճյուղերի հիմնախնդիրների լուծման նպատակով դրանց նկատմամբ կառավարությունների կողմից վարվող հատուկ քաղաքականություն[2] կամ արդյունաբերության կառուցվածքի ձևավորմանն ուղղված քաղաքականություն[3]: Հանդիպում ենք կարծիքների, որտեղ ավելի է նեղացվում վերոնշյալ հասկացության բնորոշումը՝ հանգեցնելով այն լոկ արդյունաբերության վերակազմակերպմանը[4]: Տնտեսագետները նշում են արդյունաբերական քաղաքականության այս կամ այն գործիքի դերը՝ նշելով, որ հատկապես խորը տրանսֆորմացիոն գործընթացների փուլերում(Ֆրանսիայում և Գերմանիայում 50-60-ական թվականներին, ժամանակակից տնտեսական աճի մեխանիզմների ձևավորման և էական կառուցվածքային տեղաշարժերի փուլում՝ 70-80-ական թվականների առաջին կեսին) այդ երկրներում բարեփոխման ընթացքում ակտիվորեն օգտագործվում էին արդյունաբերական քաղաքականության գործիքները [5]:

Արցախը ինդուստրիալ ուղղվածություն ունեցող երկիր դարձնելու քաղաքականությունը պահանջում է կառավարման ժամանակակից մոդելների, ինովացիոն արդյունքի կիրառման համակարգերի ներդրում՝ արդի, մրցունակ տեխնոլոգիաների կիրառման, ինչպես նաև մարդկային կապիտալի շարունակական զարգացման ապահովմամբ: Որդեգրած քաղաքականության արդյունքում հանրապետությունում կձևավորվի արտահանման ուղղվածություն ունեցող զարգացած արդյունաբերական համակարգ, որը կխթանի միջազգային ստանդարտներին համապատասխան ապրանքների թողարկումը, նոր արտաքին շուկաների ընդլայնումը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով՝ բնակչության կենսամակարդակի բարձրացումը: 2018թ. հանրապետության արդյունաբերության ոլորտի թվով 416 կազմակերպություններում աշխատել է՝ 6518 մարդ, թողարկվել է՝ 125մլրդ դրամի արտադրանք, աճը

---

[1] *Տե՛ս www.stat-nkr.am*

[2] *Տե՛ս **Tuson L.** and **Zysman I.**, 1987a American industry in international competition, Ithaca.*

[3] *Տե՛ս **Абалкин Л.И.** Концептуальные вопросы разработки промышленной политики в условиях современной Российской экономики. // Труды вольного экономического общества России. М., 1997, стр. 28-33*

նախորդ տարվա նկատմամբ կազմել է 29,3%, իրացվել է 124,8 մլրդ դրամի արտադրանք, որից արտահանվել է՝ 79.4մլրդ դրամին համարժեք արտադրանք՝ կազմելով ամբողջ իրացված արտադրանքի ծավալի 63.6%-ը: Նախորդ տարվա համեմատ արտահանումը աճել է 43,8%-ով: Արդյունաբերական արտադրանքի արտադրության, արտահանման աճի նման տեմպերը հանքագործության և բացահանքերի շահագործման ոլորտում արձանագրված միտումների հետևանք է: Հանրապետության արդյունաբերական հիմնական ճյուղերն են՝ հանքագործություն և բացահանքերի շահագործումը, սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը: Աղյուսակ 1-ում ներկայացված է արդյունաբերության կառուցվածքը ըստ հիմնական ճյուղերի:

Արդյունաբերական քաղաքականության հաջող իրականացումը ենթադրում է հետևյալ հիմնահարցերի լուծում.

1.նորմաստեղծման և օրենսդրական շրջանակներում բարեփոխումների իրականացում(ներառյալ՝ ազատականացման, ապակարգավորման, սոցիալական, աշխատանքային և արդյունաբերական օրենսդրության, ֆինանսական ինժինիրինգի, սեփականաշնորհմանը առնչվող հիմնախնդիրները),

2.արդյունաբերության վերակառուցում, մշակող արդյունաբերության տեսակարար կշռի աճի ապահովում, ՓՄՁ-ներին աջակցում, հարաբերական առավելություն կամ արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի աջակցում,

3.տարածքային զբաղվածության ապահովում և ճյուղի արտադրողականության բարձրացում,

4.մշակող արդյունաբերությունում, տրանսպորտային ենթակառուցվածքում, կապի ոլորտում ներդրումների ապահովում,

5.էկոլոգիապես մաքուր տեխնոլոգիաների ներդրում, արդյունաբերական հետազոտությունների և մշակումների նյութականացում, կադրերի պատրաստում, այդ թվում՝ կառավարչական, արտադրանքի որակի և մրցունակության բարձրացում, ստանդարտացում և հաշվառման բարելավում,

6.օտարերկրյա ներդրումների ներգրավում՝ բիզնես մշակույթի ավանդույթներով հանդերձ:

Մեր համոզմամբ արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը **պետք է ուղղված լինի՝**

●մի կողմից՝ արդյունաբերական արտադրության կառուցվածքում ազգային նպատակներին և գերակայություններին համապատասխան առաջադիմական փոփոխություններին.

●մյուս կողմից՝ երկրի արտադրական ներուժի արդյունավետ օգտագործմանն ու զարգացմանը:

Կարևոր է նաև ռեսուրսային և ժամանակային սահմանափակումների գնահատումը, որոնք ծագում են վերոհիշյալ գերակայությունները իրականացնելու գործընթացում:

Արդյունաբերության արդիականացման քաղաքականության բնագավառում մեր երկիրն առաջնություն պետք է տա իր տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող հեռանկարային ճյուղերին: Նման մոտեցումն ավելի արդարացված է այն երկրների համար, որոնց տնտեսական զարգացումը հետ է մնացել: Զարգացած երկրները, որպես կանոն, հիմնականում կենտրոնացվում են շուկայական գործոնների վրա. նախ, տնտեսության ճյուղերի միջև փոխադարձ կապի ուժեղացման, այսպես կոչված՝ արդյունաբերական խմբերի ձևավորման վրա, որոնք իրենցից ներկայացնում են տեխնոլոգիապես միմյանց մոտ արդյունաբերության ենթաճյուղերի արտադրությունների համախումբ և միմյանց հետ կապված են ուղղահայաց ու հորիզոնական կապերով: Արդյունաբերական այսպիսի խմբեր կարող են ձևավորվել օրինակ, բիոտեխնոլոգիաներ, նոր նյութեր, միկրոէլեկտրոնիկա և այլն սպասարկող ճյուղերը: Զարգացող երկրներում արդյունաբերական խմբերի ձևավորումը մասնագետների կողմից ներկայում դիտարկվում է որպես տվյալ երկրի մրցակցային առավելությունների դրսևորման և տեխնոլոգիական նորարարության զարգացման կարևորագույն գործոն[6]: Երկրորդ, երկրների տնտեսությունների տարբեր արտադրությունների միջև տարածաշրջանային կապերի և համագործակցության հաստատումն է: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը, այս կամ այն երկիրը որոշակի կոնկրետ ժամանակահատվածում կողմնորոշված է լինում դեպի վերջնական պահանջարկի այս կամ այն «գերակայությանը»: Բարեփոխվող տնտեսության ընդհանուր հաշվեկշռվածության տեսանկյունից՝ արդյունաբերական արտադրության կառուցվածքային տեղաշարժերը պետք է կախված լինեն վերջնական պահանջարկի կառուցվածքային փոփոխություններից: Արցախի Հանրապետության արդի պայմաններից ելնելով, թերևս, կարևոր է **ռազմականացված տնտեսության** մոդելին բնորոշ արդյունաբերական քաղաքականությունը, որի դրսևորումները մենք տեսնում ենք նախապատերազմյան Գերմանիայում և մասամբ՝ Իսրայելում: Ինչպես ցույց է տալիս այս երկրների փորձը, պետության պաշտպանության ծրագրերը կարող են դառնալ գիտատեխնիկական միջավայրի և ենթակառուցվածքի բավականին հզոր խթան: Սակայն հասարակության սոցիալական, քաղաքական և տնտեսության ռազմականացման մասշտաբային ծախսերից բացի, կարևոր խնդիր է նաև ռազմարդյունաբերական համալիրների «բացություն»-ը: Տնտեսությունը կզարգանա միայն ու միայն այն դեպքում, երբ ռազմարդյունաբերական համալիրը, դառնալով որակական բարեփոխումների «գեներատոր», մատչելի լինի նաև ոչ ռազմական արտադրությունների համար:

Արցախում արդյունաբերական քաղաքականությունը պետք է դիտվի նրա նպատակների տեսանկյունից, առանձնահատկություններից, ինչպես նաև նրա զարգացման և իրականացման մեխանիզմից ելնելով: Այդ նպատակները ճիշտ կլինի ձևավորել երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության և երկարաժամկետ սոցիալ-տնտեսական ռազմավարության զարգացման հիման վրա: Մասնավորապես մեր տնտեսության զարգացման այս փուլում նպատակ կարող են դառնալ.

- ներդրողներին խրախուսելը,
- հետ մնացողներին աջակցելը,
- վերակառուցմանը աջակցելը:

Առաջին դեպքում, ներդրումների աճի տեսանկյունից, արդյունաբերության ճյուղերից պետք է ընտրվեն առավել առաջադիմականները, հատկապես այս ճյուղերն պետք է ստանան առավելագույն աջակցություն: Երկրորդ դեպքում պետական աջակցություն պետք է ստանան դժվար կացության մեջ գտնվող արդյունաբերական ճյուղերը և առավել խոշոր ընկերությունները: Իսկ երբ երկրում մրցակցության աճը տնտեսապես նպատակահարմար չէ, ապա արդյունաբերական քաղաքականությունը մշակելիս օգտագործվում է երրորդ տարբերակը:

Արդյունաբերական քաղաքականության իրականացման օպտիմալ գործիքակազմի ընտրությունը Արցախում բավականին բարդ գործընթաց է, քանի որ միևնույն արդյունքին կարելի է հասնել տարբեր եղանակներով: Այսպես. վերամշակող արդյունաբերության խթանման և երկրի տնտեսության ամբողջականության պահպանման համար ո՞րն է գերադասելի. էժան փոխադրումները, էլեկտրաէներգիայի և վառելիքի ցածր գները, թե՞ սպառողների ակտիվ սուբսիդավորմամբ ապրանքների և ծառայությունների գները համաշխարհային մակարդակին կողմնորոշելը: Տեսականորեն առավել արդյունավետը առաջին տարբերակն է, սակայն գործնականում, որպես կանոն, կիրառվում է երկրորդ տարբերակը: Բոլոր դեպքերում համապատասխան որոշումները հարկավոր է ընդունել կոնկրետ վերլուծության, այլ ոչ թե մտացածին պատկերացումների հիման վրա:

Արդյունաբերական ակտիվ քաղաքականության իրականացումը կապված է այնպիսի մասշտաբային վերաբաշխող գործընթացների հետ, որոնց իրականացումը միայն գործադիր իշխանությանն է հարիր և կապված է բավարար քանակի պետական ծախսերի հետ: ԱՀ-ում կառավարման ծախսերը երկար ժամանակ գտնվում էին ակնհայտ անբավարար մակարդակում՝ կազմելով ՀՆԱ-ի մոտ 33%-ը: Ամենազարգացած հետխորհրդային երկրներում այդ ցուցանիշը այժմ տատանվում է 40-50%-ի սահմաններում, Հայաստանի Հանրապետությունում 35% է, իսկ արևմտյան զարգացած երկրներում՝ միջին հաշվով կազմում է շուրջ 50%: Բնական է, խոսքը չի վերաբերում

ձեռնարկատիրական հատվածը արյունաքամ անող պետպատվերի արհեստական «ուռճացմանը»: Պարզապես ակտիվ արդյունաբերական քաղաքականության անցկացումը կմնա որպես լավագույն ցանկություն, եթե դրա իրականացման համար չեն հավաքագրվում համապատասխան ռեսուրսներ և միջոցներ: Վերջապես չի կարելի չընդունել, որ արդյունաբերական քաղաքականության իրականացումը ուղեկցվում է որոշակի ռիսկով: Դժվար չէ սխալվել ԳՏԱ հեռանկարային հարաբերության տեսանկյունից տնտեսական զարգացման գերակայությունների ընտրության ընթացքում: Կարծում եմ Արցախի ձեռներեցներին հուզում են այն հիմնախնդիրները, որոնք արդյունաբերական քաղաքականության կարևոր օբյեկտ են հանդիսանում և որոնց լուծման հաջողությունից է կախված դրա իրականացման արդյունավետությունը, մասնավորապես.

-հարկային քաղաքականությն հաճախակի փոփոխությունը, արդյունաբերական կազմակերպությունների արտահանման կարողությունների ընդլայնման ուղղությամբ գործուն ծրագրերի բացակայությունը,

-արդյունաբերության ոլորտում՝ միկրո մակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակասը, տեղեկատվական բազայի, ոլորտային զարգացման ծրագրերի բացակայությունը.

-իրական հատվածում ֆինանսական ռեսուրսների ներգրավվածության ոչ բավարար մակարդակը,

-հիմնականում ներմուծված հումքի վրա արտադրության հիմնվածությունը, արտադրանքի ցածր մրցունակությունն ու արտադրողականությունը.

-ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխան կառավարման համակարգերի և կառավարիչների բացակայությունը, մարքեթինգի իրականացման ցածր կարողությունները.

-ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ցածր մակարդակը.

-տնտեսական դատարանների բացակայությունը,

-վարկային ոչ արդյունավետ քաղաքականությունը,

-արդյունաբերական, գյուղատնտեսական և արդյունաբերական հատվածների միջև ոչ արդյունավետ փոխգործունեությունը:

Չնայած հանրապետությունում առկա սոցիալական լարված իրավիճակին, անհրաժեշտ է կարճ ժամանակահատվածում, ռեսուրսներ մոբիլիզացնել գիտության վրա կատարվող ծախսերի ավելացման համար, գիտության վրա կատարվող ծախսերը պետք է հասցնել ՀՆԱ-ի գոնե 5-6%-ին: Ընդ որում, պետության ջանքերը պետք է ուղղվեն այն մշակումների զարգացմանը, որոնք ունեն մրցակցային առավելություններ՝ հնարավորություն ստեղծելով հայրենական արտադրողներին մրցակցության մեջ մտնելու այլ երկրների սուբյեկտների հետ: Կարևորում ենք նաև պետության նպատակային աջակցությունը արդյունաբերական կազմակերպություն-ներին արտաքին և ներքին շուկաների մասին

անհրաժեշտ տեղեկատվության մատակարարման, ինչպես նաև սեփական արտադրանքը գովազդելու հնարավորության ընձեռման հարցերում: Բացի այդ, սպառողները բավարար ինֆորմացիա չունեն շուկայում առաջարկվող ապրանքների որակի վերաբերյալ, ներմուծվող ապրանքները հաճախ չեն համապատասխանում այն որակական չափանիշներին, որոնք ներկայացվում են, արդյունքում տեղական արտադրողները հայտնվում են անհավասար մրցակցային պայմաններում: Այս առումով անհրաժեշտ է բարելավել արտադրանքի որակի ստուգման և վերահսկման մեխանիզմները՝ դրանք համապատասխանեցնելով Եվրոմիության չափանիշներին, ապահովելով լաբորատորիաները արդյունաբերության արտադրանքի ստուգման ժամանակակից սարքավորումներով և այլն: Առավել լուրջ է կադրային ապահովվածության հարցը. այսօր կանգնած ենք արդյունաբերության ոլորտում նեղ մասնագետների սերնդափոխության խնդրի առաջ, անհրաժեշտ է արհեստագործական և միջին մասնագիտական հաստատությունների քանակակական ընդլայնման և դասավանդման որակի բարձրացման հետ մեկտեղ՝ բարձրացնել նաև արհեստների հեղինակությունը: Եվրոպայում յուրաքանչյուր հազար բնակչին միջին հաշվով բաժին է ընկնում շուրջ 50փոքր ձեռնարկություն, Բուլղարիայում՝ 38, Լեհաստանում՝ 42, Հունգարիայում՝ շուրջ 46, Հայաստանում՝ 30, այնինչ Արցախում այդ ցուցանիշը 24 է:Արցախում փոքր բիզնեսի թերզարգացածության արմատները պետք է փնտրել տնտեսության իրական հատվածի զարգացման տեմպերի մեջ: Հարկ է նշել, որ փոքր բիզնեսի գերակայությունը ոչ բոլոր ոլորտներում է նպատակահարմար: Էներգետիկ հատվածը, օրինակ, առավել քիչ չափով է կարիք զգում փոքր բիզնեսի վրա հենվելուն և նրա հետ կոոպերացվելուն, քան ասենք՝ սննդի արդյունաբերությունը: Ուստի պատահական չէ, որ փոքր ձեռնարկությունների կեսից ավելին կենտրոնացած է առևտրական-միջնորդական ոլորտում: Այսպես, ԱՀ ազգային վիճակագրկան ծառայության բիզնես ռեգիստրի տվյալներով Արցախի արդյունաբերության մեջ հաշվվում է գործող փոքր ձեռնարկությունների շուրջ 16.3%-ը, շինարարության մեջ՝ 11.4%-ը, տրանսպորտում՝ 1.5%-ը, իսկ առևտրի ոլորտում՝ 44.5%-ը: Հետաքրքիր է նաև, որ արդյունաբերության մեջ գործող կազմակերպությունների 89.8%-ը փոքր և գերփոքր են, 10.2%-ը միջին և խոշոր, որոնց, սակայն բաժին է ընկնում արդյունաբերական արտադրանքի շուրջ 87%-ը: Այդ նույն ժամանակ փոքր ձեռնարկությունների ներկայացուցիչների անկետային հարցումը՝ նրանց զարգացման գերակա ուղղությունների և նախասիրությունների վերաբերյալ, ցույց է տալիս, որ տնտեսության այդ հատվածի ճյուղային կառուցվածքը բոլոր հնարավորություններն ունի տնտեսության իրական հատվածում առավել տիրապետող դառնալու համար:

Աղյուսակ 1.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ (տոկոսներով ընդամենի նկատմամբ)

	1995	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Ամբողջ արդյունաբերությունը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում, ընդամենը	-	-	36.0	51.7	46.2	39.4	41.3	45.7	40.4	26.4	25.7	27.9	24.2	29.0	53.4	55.4
Մշակող արդյունաբերություն	67.1	57.3	46.7	33.5	34.9	39.5	36.2	33.1	37.8	46.6	43.2	39.4	40.4	33.8	21.3	22.7
Էլեկտրականության ,գազի,գոլորշու և լավորակ օդի մատակարարում	32.9	42.7	17.3	14.8	18.9	21.1	22.5	21.2	21.1	26.2	30.2	31.8	34.1	36.0	24.3	21.2
Ջրամատակարարում,կոյուղի,թափոն-ների կառավարում և վերամշակում	-	-	-	-	-	-	-	-	0.7	0.8	0.9	0.9	1.3	1.2	1.0	0.7

Աղյուսակ 2.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

	1995	2000	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Արդյունաբերության մասնաբաժինն ավելացված արժեքում, %	-	7.4	17.0	16.3	15.2	17.9	18.7	17.5	14.7	14.1	16.8	16.4	16.9	24.7	28.5
Արդյունաբերական կազմակերպությունների թիվը, միավոր	23	117	183	202	220	300	304	323	346	376	379	346	369	395	416
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն դրամ	1640.3	4854.6	17773.0	22437.4	25345.5	34092.3	42991.8	45822.5	40871.7	44339.4	52046.8	53541.9	58999.5	97490.3	125006.1
Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	92.5	116.8	99.1	106.7	111.6	115.6	105.3	100.8	99.2	110.0	117.2	102.5	109.7	154.8	129.3
Արդյունաբերողների գների ինդեքսը նախորդ տարվա նկատմամբ, %	-	99.6	98.9	80.6	101.2	116.4	120.0	110.2	88.5	103.0	101.4	106.9	103.0	102.4	98.0
Հիմնական արտադրական միջոցները(տարեվերջին,ըստ սկզբնական արժեքի), մլն դրամ	-	-	--	: 30664.9	45458.2	48520.7	43362.9	51449.3	72144.6	86880.5	: 96361.0	145754.	158986.1	178648.8	201456.3
Արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թվաքանակը, մարդ	2773	2576	4606	5095	5034	5170	5357	5462	5803	6237	6258	6630	6345	6319	6518
նախորդ տարվա նկատմամբ,%	-	105.7	112.5	104.6	98.8	102.7	103.6	102.0	106.2	107.5	102.2	105.9	95.7	99.6	103.1
Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ	4147	22573	54938	72689	86502	91570	99637	105019	108030	140779	142820	155883	152707	16620 5	184542

Աղյուսակ 3.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ *%-ընդամենի նկատմամբ*

	1996	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
Ք. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ	78.9	84.6	50.9	38.0	40.3	49.9	49.3	46.2	43.1	49.7	48.4	48.8	49.7	45.0	28.3	28.4
ԱՍԿԵՐԱՆ	8.2	3.9	5.2	3.5	4.8	4.6	3.9	3.9	5.6	6.3	6.0	5.5	5.7	5.1	3.5	3.2
ՀԱԴՐՈՒԹ	2.0	0.5	0.4	0.8	0.6	1.2	2.2	1.6	2.7	3.7	4.1	3.1	3.0	3.0	2.1	1.9
ՄԱՐՏԱԿԵՐՏ	5.3	1.0	36.7	52.2	46.7	40.1	40.2	44.5	42.2	28.9	28.4	30.7	26.6	32.3	56.5	58.4
ՄԱՐՏՈՒՆԻ	4.0	1.5	6.1	4.9	7.0	2.8	3.3	2.5	4.0	7.7	8.2	7.1	8.6	8.0	4.8	3.6
ՇԱՀՈՒՄՅԱՆ	-	-	-	-	-	-	0.0	0.0	0.2	0.3	0.3	0.3	0.5	0.7	1.3	1.4
ՇՈՒՇԻ	1.5	0.5	0.3	0.2	0.3	0.3	0.3	0.2	0.6	0.8	0.8	0.8	0.9	0.8	0.4	0.4
ՔԱՇԱԹԱՂ	-	8.0	0.4	0.4	0.3	1.1	0.8	1.1	1.6	2.6	3.8	3.7	5.0	5.1	3.1	2.7

Գրականություն

1. www.stat-nkr.am
2.Tuson L. and Zysman I., 1987a American industry in international competition, Ithaca.
3.Абалкин Л.И. Концептуальные вопросы разработки промышленной политики в условиях современной Российской экономики. // Труды вольного экономического общества России. М., 1997, стр. 28-33.
4.Петроков Н.Я. Реструктуризация как ключевой инструмент промышленной политики / Труды ВЭОР. Промышленная политика России на пороге XXI века.М, 1997, стр.40-42.
5.Դարբինյան Ա.Վ.,<<Հայաստանը միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացում>>, Երևան, 2000թ., էջ 27-29:
6. Այս մասին մասնավորապես ընդգծվել է <<Շուկայական ձևափոխումների և կառուցվածքային տեղաշարժերի քաղաքականությունը Ռուսաստանում>> գերմանա-ռուսական սեմինարում՝ գերմանացի մասնակիցների կողմից: Տես՝ ՀՆԻ, 1996 N 1-2:
7.Гельвановский М.И. Государственная промышленная политика в переходный период // Аналитический вестник ИАУ, советы реформации РФ, 1998, N2. Часть 2, стр.50-65.
8.Michael E. Porter, 1998. The Competitive Advantage of Nations. P. 71.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.դ., Թ.Ն.Մանասերյանը: